ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 612-Ա « 21 » ապրիլի 2026թ.

ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 13-ի «Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառում կազմակերպելու մասին» հ.1909-Ա որոշման 1-ին կետի 6) ենթակետի կատարումն ապահովելու, 2026 թվականի ապրիլի 24-ին Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի այցելուների տրանսպորտային սպասարկումը կազմակերպելու նպատակով.

1.Հանձնարարել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենին՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի ավտոբուսներով և միջոցների հաշվին կազմակերպել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի այցելուների անվճար փոխադրումը (հետագայում Երևան համայնքի միջոցներից փոխհատուցման հնարավորությամբ) «Հրազդան» մարզադաշտին հարող տարածքից, ժամը 8^{30}-ից մինչև 22^{00}-ն, հետևյալ երթուղիներով.

հ.1 երթուղի - «Հրազդան» մարզադաշտ – Աթենքի փողոց – Հաղթանակի կամուրջ - Արգիշտիի – Իտալիայի - Խորենացու - Ագաթանգեղոսի փողոցներ – մետրոպոլիտենի «Զորավար Անդրանիկ» կայարան:

Հետադարձը՝ Ագաթանգեղոսի – Գր.Լուսավորչի – Արգիշտիի փողոցներ - Հաղթանակի կամուրջ - Աթենքի փողոց - «Հրազդան» մարզադաշտ:

հ.2 երթուղի - «Հրազդան» մարզադաշտ – Ծիծեռնակաբերդի խճուղի- Լենինգրադյան - Կիևյան փողոցներ - մետրոպոլիտենի «Բարեկամություն» կայարան:

Հետադարձը՝ նույն ուղեգծով:

2.Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության պետին՝ սույն կարգադրության մասին զանգվածային լրատվամիջոցներով տեղեկացնել մայրաքաղաքի ազգաբնակչությանը:

3.Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի վրա:

4.Կարգադրության կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ